Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ում

Ի պատասխան Լոտ 1՝ A-47EN , «Երևանի թիվ 45 հիմնական դպրոցի կառուցման» շինարարական աշխատանքների գնման մրցույթի վերաբերյալ 2024/07/09 ժամը 23:00-ին www.armeps.am համակարգով ստացված հարցմանը՝ ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումը.

Հարց 1՝ A-47EN , «Երևանի թիվ 45 հիմնական դպրոցի կառուցման» շինարարական աշխատանքների կատարման մրցույթի հրավերում ենթակապալի ներգրավվածության տոկոսային սահմանաչափ նշված չէ, արդյո՞ք սա ենթադրում է, որ մասնակիցը կարող է ներգրավել մինչև 100 տոկոսով աշխատանքները իրականացնող այլ ընկերություն որպես ենթակապալ՝ մրցույթի փաստաթղթերը հանձնելիս ներկայացնելով նաև ենթակապալի փաստաթղթերը կամ ենթակապալի փաստաթղթերը մրցույթը հաղթելուց հետո ներկայացնելով:

Պատասխան 1՝ Մրցութային փաստաթղթի «Բաժին 7 – Պայմանագրի ընդհանուր պայմաններ»-ի՝ «1. Սահմանումներ» կետի «jj» ենթակետի համաձայն՝ ենթակապալառուն այն անձն է կամ կորպորատիվ մարմինը, որը Կապալառուի հետ պայմանագիր է կնքել **Աշխատանքների մի մասը** (ներառյալ՝ շինհրապարակի աշխատանքները) իրականացնելու վերաբերյալ:

Նույն բաժնի «13. Ենթակապալի պայմանագիր» 13.1 ենթակետի համաձայն՝ կապալառուն կարող է ենթակապալի պայմանագիր կնքել Ծրագրի ղեկավարի համաձայնությամբ, սակայն չի կարող Պայմանագիր շնորհել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության: Ենթակապալը չի կարող փոխել Կապալառուի պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից, հարկ է արձանագրել, որ ենթակապալն իրավասու կարող է լինել կատարելու աշխատանքների մի մասը, ընդ որում, Կապալառուն իրավասու է կնքելու ենթակապալի պայմանագիր, բացառապես Ծրագրի ղեկավարի համաձայնությամբ, հետևաբար հնարավոր ենթակապալի պայմանագրի յուրաքանչյուր դրույթ պետք է համաձայնեցված լինի Ծրագրի ղեկավարի հետ, միևնույն ժամանակ, հատկանշական է այն սահմանումը, որ ենթակապալը որևէ կերպ չի կարող փոխել Կապալառուի պարտավորությունները, ուստիև ենթակապալի պայմանագրի դրույթների գնահատումը պետք է իրականացվի և՛ աշխատանքների մի մասի կատարում նախատեսող, և՛ Կապալառուի պարտավորությունները փոխելու անթույլատրելիության լույսի ներքո:

Հարգանքով՝

Գնումների վարչություն

11 հուլիսի 2024թ